ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/6

ք. Երևան «16» «03» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Փառանձեմ Սուքիասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***4290000 (չորս միլիոն երկու հարյուր իննսուն հազար)*** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված է 31 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց-63	Ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011029445	Հ/Հ 220013334374000
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 04225682
ՔԿ ծառայություն՝ Ա. Ղազարյան	տնօրեն՝ Փ. Սուքիասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված N 1
« 16 » « 03 » 2022 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-22/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/3	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում կիսաբաց ռեժիմի հարկը մեկուսարանին համապատասխան վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն՝ համաձայն հավելված 1-ի	ՀՀ դրամ	1 990 000	1	ք.Երևան Արշակունյաց 63	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում
2	71241200/5	ՀՀ ԱՆ «Վարդաշեն», «Սևան», «Արմավիր», «Արթիկ» և «Վանաձոր » քրեակատարողական հիմնարկներում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց (ՀԽՈՒԱ) համար համապատասխան պայմաններ ստեղծելու համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն՝ համաձայն հավելված 2-ի	ՀՀ դրամ	2 300 000	1	ք.Երևան Արշակունյաց 63	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60 օրվա ընթացքում

Հավելված 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում կիսաբաց ռեժիմի հարկը մեկուսարանին համապատասխան վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայության ձեռքբերման վերաբերյալ

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ - ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում կիսաբաց ռեժիմի հարկը մեկուսարանին համապատասխան վերակառուցելու նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների բաղկացուցիչ մասն են կազմում քրեակատարողական ծառայության բարեփոխումները, ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած քրեակատարողական համակարգի բարեփոխումների ծրագրով:

Քրեակատարողական ծառայության բարեփոխումներում իրավական և այլ ուղղություններին զուգահեռ կարևորվում են ենթակառուցվածքային բարեփոխումները:

Սույն առաջադրանքով նախատեսվում է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ Հիմնարկում) կիսաբաց ռեժիմին համապատասխանող հարկը վերակառուցել մեկուսարանին համապատասխան պայմաններ ստեղծելու նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Սույն առաջադրանքը կատարելու համար պայմանագիր շնորհելուց և ստորագրելուց առաջ նախագծողները պետք է անցնեն նախավորակավորման փուլ («Պետության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի առաջին փուլ): Մասնավորապես, նշված ժամկետի ընթացքում Նախագծողները այլ որակավորման փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է Պատվիրատուին ներկայացնեն առաջադրանքը կատարելու հետ կապված իրենց հայեցակարգային մոտեցումները:

Սույն տեխնիկական առաջադրանքը ներառում է քրեակատարողական հիմնարկների շինությունների և անհրաժեշտ բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերի սկզբնական ուսումնասիրումը, ինչպես նաև շինարարության ընթացքում իրականացվող

հեղինակային հսկողության կատարումը: Նախագծողի կողմից մշակված գծագրերը և սույն առաջադրանքով սահմանված այլ շինարարական փաստաթղթերը ներառվելու են շինարարական կազմակերպության ընտրության մրցույթային փաթեթի կազմի մեջ, որպես մրցույթային փաթեթի անբաժանելի մասեր: Տեխնիկական հատկորոշումները (սպեցիֆիկացիաները) և գծագրերը պետք է մշակված լինեն ամենայն մանրամասնությամբ Նախագծի կազմի մեջ ներառված բոլոր մասերի համար այն է՝

գլխավոր հատակագիծ,

ճարտարապետաշինարարական մաս,

ինժեներական մաս,

շինարարության կազմակերպում,

նախահաշիվ, ծավալաթերթ (հայերեն և ռուսերեն լեզուներով).

որը հնարավորություն կտա շինարարություն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթին մասնակցող բոլոր մասնակիցներին ունենալ պահանջվող ծավալների վերաբերյալ նույնատեսակ մոտեցում: Նախագծի կազմի մեջ ներառման ենթակա ներկայացված մասերը հանդիսանում են նվազագույն պահանջ, սպառիչ չեն և Նախագծողը պարտավոր է լրացնել նախագծային փաստաթղթերը նոր մասերով, եթե դա անհրաժեշտ է:

Սույն Տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է Պատվիրատուի կողմից տրվող Նախագծային առաջադրանք, որը պարտադիր է Նախագծողի կողմից կատարման համար:

2. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ա. Հիմնարկները պետք է ունենան

Անհրաժեշտ է, որ Հիմնարկում վերակառուցվող տեղամասը ունենա համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման, օդափոխության և օդորակման, բնական և արհեստական լուսավորության, էլեկտրական սնուցման, կապի, հակահրդեհային, հաշմանդամների տեղաշարժման համար հարմար թեքահարթակներ և այլ հնարավորություններ: Միաժամանակ, բոլոր նշված հանգույցները գործառութային իմաստով պետք է լինեն միմյանցից տարանջատված, սակայն ծավալային իմաստով պետք է լինեն մեկ ամբողջություն:

Հիմնարկը պետք է ունենա **անվտանգության ապահովման բարձրագույն կատեգորիա**:

Ազատազրկված անձանց բնակելի մասնաշենքը

Անհրաժեշտ է, որ ազատությունից զրկված անձանց բնակեցման համար վերակառուցվող բնակելի կացարաններն ունենան հետևյալ հանգույցները.

- Կացարանային հանգույցներո անհրաժեշտ է նախատեսել է 50 անձի համար: Այն պետք է նախատեսվի 2-ից մինչև 6 կալանավորված անձանց համար, յուրաքանչյուր անձին պետք է բաժին հասնի 4 քմ բնակելի տարածք, նախատեսված է վերակառուցել և հարդարել 13 առանձնացված կացարաններ՝ ընդհանուր մոտ 250 քմ բնակելի տարածքով, որից 15 քմ փակ սանհանգույցներ՝ արտաքին և ներքին ջրամատակարարման ու ջրահեռացման նոր ցանց, փայտյա դռների փոխարինում մետաղականի, պատուհանի բացվածքների փոքրացում, պատուհանների փոխարինում:
- Անհրաժեշտ է վերակառուցել 1 ընդհանուր լոգասենյակ մոտ 16 քմ մակերեսով, արտաքին և ներքին ջրամատակարարման ու ջրահեռացման նոր ցանց:
- Անհրաժեշտ է կառուցել մոտ 12 քմ մակերեսով երկաթբետոնե կամ մետաղական հարթակ՝ երրորդ հարկից դեպի զբոսաբակ տանող աստիճանավանդակի մոտ:

Ազատազրկված անձը պետք է հնարավորություն ունենա առանց բլոկից դուրս գալու ստանալ ամբուլատոր բուժում, սոցիալական աջակցություն, հեռախոսային զանգի հնարավորություն, որի համար անհարաժեշտ է վերակառուցել և հարդարել մոտ 18 քմ մակերեսով տարածք:

Հիմնարկի մեկուսարանի պայմաններին համապատասխանող բլոկը պետք է ունենա նաև ռեկրեացիոն տարածքներ:

Անհրաժեշտ է լոգասենյակում և 2 խցերում նախատեսել հատուկ պայմաններ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, սանհանգույցներն ու բաղնիքը պետք է նախագծվեն այնպես, որպեսզի սայլակով կամ ձեռնափայտով տեղաշարժման համար խոչընդոտ չհանդիսանա, օգտվելու համար լինի դյուրին: Նախագծելիս անհրաժեշտ է վերակառուցվող տեղամասերում նվազագույնի հասցնել թաքստոցներ ստեղծելու, ինչպես նաև դիտավորյալ վնասելու հնարավորությունը: Խցերի կոմունիկացիաները պետք է հնարավորություն ընձեռեն դրանց միջանցքից կառավառելու հնարավորություն:

Հարդարման աշխատանքներ պետք է իրականացվեն միջանցքներում մոտ 130 քմ մակերեսով: Միջանցքում նախատեսել եվրոպրոֆիլներով կառուցված հերթապահ խմբի դիտակետ 3...4 քմ մակերեսով:

3. ՆԱԽԱԳԾՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Տեխնիկական առաջադրանքը կատարելիս, Նախագծողը պետք է ուղղորդվի ՀՀ տարածքում գործող նախագծային նորմատիվ փաստաթղթերով, ստանդարտներով և շինարարությունը կարգավորող այլ նորմերով, հատկապես՝ սեյսմակայուն շինարարության, հակահրդեհային, անվտանգության և ահազանգման համակարգերը կարգավորող նորմատիվ փաստաթղթերով:

Հատակագծային և տարածական լուծումների (արտաքին և ներքին տարածքների գոտիավորման) նախագծման համար պետք է հիմք հանդիսանա նմանատիպ կառույցների համար գոյություն ունեցող և կիրառվող միջազգային (հատկապես՝ եվրոպական) փորձը: Առաջադրանքը կատարելու ամբողջ ընթացքում Նախագծողը պարտավոր է սերտ համագործակցել **Պատվիրատուի հետ**, անհրաժեշտ ուղեցույցներ ստանալու նպատակով: Միաժամանակ, առաջադրանքը կատարելիս Նախագծողը պարտավոր է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կողմից հաստատված քաղաքաշինության հիմնական նորմատիվ փաստաթղթերից (ուղեցույցներ), որոնք չեն կարող համարվել սպառիչ:

Ամբողջ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը պետք է կատարվի ըստ հետևյալ փուլերի՝

- Ի-ին փուլ՝ կոմպլեքսային նախագիծ,
- II-րդ փուլ հաստատում,
- III-րդ փուլ՝ մրցութային փաստաթղթերի պատրաստում,
- IV-րդ փուլ՝ հեղինակային հսկողության իրականացում:

Յուրաքանչյուր փուլը ներկայացնում է աշխատանքների կատարման առանձին բաժիններ /մասեր, որոնց հանդեպ հիմնական պահանջները ներկայացվում են ստորև.

ՓՈՒԼ 1. Կոմպլեքսային Նախագիծ

Նախագծման Ի-ին փուլն իրենից ներկայացնում է կոմպլեքսային նախագծի մշակում և բաժանվում է հետևյալ ենթափուլերի՝

- տեխնիկական /շինարարական անձնագրի կազմում/,
- տեխնիկական նախագծի մշակում,
- աշխատանքային նախագծի մշակում:

<u>Ենթափուլ 1.1. Տեխնիկական/շինարարական անձնագիր</u>

Նախքան նախագծային աշխատանքների սկսելը, Նախագծողը պարտավոր է կազմել շինության տեխնիկական /շինարարական անձնագիրը/:

Տեխնիկական /շինարարական անձնագրի/ մեջ պետք է ներառված լինեն.

- շինության ուրվագիծը,

<u>Ենթափուլ 1.2. Տեխնիկական (էսքիզային) նախագիծ</u>

Նախքան հիմնական նախագծում սկսելը, Նախագծողը պարտավոր է այցելել կառուցապատման վայրը, մանրամասն ուսումնասիրել և ծանոթանալ գոյություն ունեցող շինության իրավիճակին:

Նախագծողը պարտավոր է համագործակցելով Պատվիրատուի ներկայացուցիչների հետ մշակել շենքի տարածա-հատակագծային այլընտրանքային լուծումներ (էսքիզային նախագծեր), հիմք ընդունելով քրեակատարողական հիմնարկներին ներկայացվող Եվրոպական միության պահանջները:

<u>Ենթափուլ 1.3. Աշխատանքային Նախագիծ</u>

Աշխատանքային նախագիծը, այսինքն՝ աշխատանքային գծագրերի մշակումը, հանդիսանում է սույն փուլի հիմնական ենթափուլը: Նախագծողից պահանջվում է մշակել աշխատանքային գծագրեր՝ «Գլխավոր հատակագիծ», «Ճարտարապետաշինարարական մաս», «Ներքին ինժեներական ցանցեր և համակարգեր», «Աշխատանքների կազմակերպման նախագիծ» և «Նախահաշիվ, ծավալաթերթ (հայերեն և ռուսերեն լեզուներով)»: Աշխատանքային գծագրերը ըստ նախագծի առանձին բաժինների պետք է ներառվեն առանձին ալբոմների մեջ: Բոլոր աշխատանքային գծագրերը պետք է իրականացվեն AUTOCAD ծրագրային համակարգով:

Պարտադիր աշխատանքային գծագրերի ցանկը ըստ նախագծի բաժինների և առանձին ալբոմների բերվում է ստորև.

«Գլխավոր հատակագիծ».

Ալբոմը պետք է ներառի նաև արտաքին ինժեներական ցանցերը և գծերը:

Սույն ալբոմը պատրաստելիս, Նախագծողը պետք է ղեկավարվի ՀՀ-ում հաստատված քախաքաշինական նորմատիվ և արտաքին կոմունիկացիաների նախագծումը կարգավորող այլ նորմատիվային փաստաթղթերով.

Սույն ալբոմում գծագրերը պետք է ներառեն՝

- ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,
- հորիզոնական և տեղակապման հատակագիծ Մ 1:500 (կամ ընդունված մեկ այլ մասշտաբի),
- հողային աշխատանքների քարտագրամ, հողային աշխատանքների ծավալների ամփոփ,
- ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Ալբոմ 1. «Ճարտարապետական մաս».

Ճարտարապետական մասի գծագրերը մշակելիս, նախագծողը պետք է ուղղորդվի քրեակատարողական հիմնարկների եվրոպական չափանիշներով, ինչպես նաև ՀՀ-ում հաստատված քախաքաշինական նորմատիվ և այլ նորմատիվային փաստաթղթերով.

Ճարտարապետական մասի գծագրերում պարտադիր պետք է լուծում տրվի նաև ստորև բերվող պահանջներին և ներառեն՝

- ընդհանուր տվյալներ, հատակների տիպերը, հարդարման աշխատանքների ամփոփագրերը, տարատեսակ դռների և պատուհանների ամփոփագրերը,
- հարկերի հատակագծերը Մ 1:100, սենյակների անվանումները և մակերեսները, հանգուցային լուծումները (եթե այդպիսիք կան),
- ճարտարապետական լուծումների/դետալների մանրամասները և նյութածախսը,
- լայնական և երկայնական կտրվածքները Մ 1:100 և բնորոշ հանգույցները,
- կախովի առաստաղի մանրամասները, հանգույցները և նյութածախսը,
- դռների և պատուհանների նկարվածքը, կտվածքները, հանգույցները, օգտագործվող նյութերը և նյութածախսը,

•ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Ալբոմ 2. «Կոնստրուկտորական մաս»

Կոնստրուկտորական մասի գծագրերը պետք է մշակվեն համաձայն ՀՀ-ում հաստատված քախաքաշինական նորմատիվ և այլ նորմատիվային փաստաթղթերով.

•ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,

•հիմքերի և ծածկի հատակագծերը կոնստրուկտիվ էլեմենտներով,

•կոնստրուկցիաների և կոնստրուկտիվ էլեմենտների (հավաքովի կամ միաձույլ) մակնիշավորման գծագրերը,

•կոնստրուկցիաների և կոնստրուկտիվ էլեմենտների կտրվածքները, անհրաժեշտ հանգույցները, բետոնի և ամրանների մասնագրերը և նյութածախսի ամփոփը,

•բոլոր առանձին վերցված պատերի կոնստրուկտիվ փռվածքները,

•ներքին աստիճանների կոնստրուկտիվ լուծումները, հատույթները և նյութածախսը,

•ամբողջ շենքի համար անհրաժեշտ նյութածախսի ամփոփը,

•ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Ալբոմ 3. «Ներքին ինժեներական ցանցեր և համակարգեր»

Ինժեներական ցանցերի և գծերի գծագրերը պատրաստելիս, Նախագծողը պետք է ղեկավարվի ՀՀ-ում հաստատված քախաքաշինական նորմատիվ և այլ նորմատիվային փաստաթղթերով.

Ալբոմ 4-ը պետք է բաղկացած լինի առնվազն հետևյալ բաժիններից՝

Բաժին 1. «Ջուր և կոյուղի»

•ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,

•հարկերի հատակագծեր Մ 1:100,

•ակսոնոմետրիկ սխեմաներ,

•օգտագործվող սարքերի և սարքավորումների մանրամասն տեխնիկական բնութագրերը,

- մասնագրեր և նյութածախսի ամփոփագրեր
- ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Բաժին 2. «Օդորակում և օդափոխություն»

- ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,
- օգտագործվող սարքերի և սարքավորումների մանրամասն տեխնիկական բնութագրերը,
- մասնագրեր և նյութածախսի ամփոփագրեր,
- ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Բաժին 3. «Էլեկտրականություն»

- ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,
- նյութերի մասնագիր,
- էլ. բաշխման սխեմա,
- հարկերի էլ. սարքավորումների հատակագիծ 1:100,
- հարկերի լուսավորության հատակագիծ 1:100,
- մասնագրեր և նյութածախսի ամփոփագրեր,
- ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Ալբոմ 4. «Նախահաշիվ»

- ամփոփ նախահաշիվ,
- օբյեկտային նախահաշիվներ,
- լոկալ նախահաշիվներ,
- ծավալաթերթ (հայերեն և ռուսերեն լեզուներով):

Նախահաշիվը պետք է կազմվի ՀՀ տարածքում գործող ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված գնացուցակներով (բյուլետեններով կամ ինֆորմացիոն տեղեկագրով) և նորմերի հիման վրա: Հաշվարկը կատարվում է ՀՀ դրամով:

Բացի վերը նշված Նախահաշվից, Նախագծողը համակարգչային ֆայլով (ցանկացած ժամանակից կրիչով) պետք է ներկայացնի կատարվելիք աշխատանքների միավոր գների ցանկ Պատվիրատուի կողմից ընդունելի ձևով:

Ալբոմ 5. «Շինարարության կազմակերպման նախագիծ»

- շինարարական գլխավոր հատակագիծ,
- անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները,
- օրացուցային գրաֆիկ,
- ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրեր և փաստաթղթեր, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Աշխատանքային նախագիծը պատրաստելիս, Նախագծողը պետք է Նախագծում արտացոլի նաև հետևյալ խնդիրների լուծումները՝

- քրեակատարողական հիմնարկի շենքի անվտանգությունն ապահովող պահանջները (ելնելով միջազգային պրակտիկայում ներկայումս օգտագործվող չափանիշներից),
